

ուրեմն թոյլ տուր և ինձ գալընդ քեզ յատեան
անդր :

ԿԵՍ. ՈՀ. Փոխել զհրամանս իմ ոչ առնում
յանձն . փոփոխումն խորհրդոց վատութեան է
նշանակ :

ՏՈԼ. Բարւոք է . թողից զեեզ որպէս ախորժես .
սակայն բազում երկիւզիւ :

ԿԵՍ. Լաւ է ինձ մեռանել , քան ՚ի մահուանէ
զանգիանել . հապա երթիցուք :

Կը շարունակուի :

=====

ԲԱՆԱԼԻՔ

ԲՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՈՒԹԻՅ

(Տես երես 158)

460 Ինչո՞ւ համար առաստաղին ամեն կողմերն ալ հաւասարապէս սե չեն ըլլար : — Որովհետեւ առաստաղին ծեփն տեղ տեղ գուրս ցցուած և անհարթ կէտեր ունի . օգուն ընթացքն ասոնց վրայ փոշոյ և ձանձախարիթի աւելի մեծ քանակութիւն մը կը բերէ :

461 Ծուխն կը վեասէ բուսեղինաց : — Այս . սաստիկ ծուխի քանակութիւն մը՝ բոյսերուն տերեւները կը թափէ և զանոնք կը մեռցընէ . բայց պզտի քանակութիւնն չի վեասեր , մանաւանդ թէ՝ եթէ ըստ պատշաճ գործածուի՝ մեծ օգուտ ալ կ'ընէ :

462 Այս ծուխին գործածութիւնն ինչպէս օգտակար կը բուսեղինաց :

— Որովհետեւ քանի մը բոյսեր և մասնաւրապէս որթերը կը պաշտպանէ սառելէն՝ որ կը բուսեղինաց պատճառիլ անոնց ծաղկելուն ժամանակ :

463 Ի՞նչ կերպով ծուխն կը պահէ որթերը գարնան սառերէն : — Երկու կերպով . նախ՝ իրեն հետ բերած ջերմութեամբը սառին հալումը կը շուտացընէ որթի ուռերուն մէջ , և կը դիւրացընէ բուսեղէն հիւթիւն գարձուածքը : — Բ . կը խափանէ արեւուն ճառագայթիները , որոնք ուղղակի կը հասնին ջրոյ և սառի կայլակներուն վրայ , և սառոնք ալ սապնաձեւ ապակիի մը զօրութիւն առնելնուն համար՝ կը բուսեղին այրել կեղեց և բոյսին վեասել :

464 Ի՞նչ բան է ճրագի մը կամ կանթեղի մը ծուխը : — Բաղադրութիւն մ'է տեսանելի չողիներու , որք առաջ կու գան կազային գոյութիւններէ և ամենապզտի ածղուկի կտորներէ՝ որք բոցէն չեն սպառուած :

465 Ինչո՞ւ համար ճրագ մը , երբոր ծայր չարդարուի , ծուխ կու տայ : — Նախ որ՝ պատրուգին երկայնութիւնն աւելի ածղուկ կը մատակարարէ բոցին՝ քան որչափ

որ ասիկայ կը բուսեղինար սպառել : — Բ . կը նուազցընէ բոցին տաքութիւնը , որով չի կը բուսեղինար սպառել և ոչ իսկ ծուխին սովորական քանակութիւնը :

466 Բայց ինչո՞ւ համար նաև մեղրամոմէ ճրագք՝ որ յարդարման պէտք չունին երբեմն ծուխ կ'արձրկեն : — Մեղրամոմէ ճրագներն այն ատեն ծուխ կու տան , երբ ծայրին արտաքին շրջապատն շատ բարձրացած ըլլայ , կամ ինչպէս սովորաբար կ'ըսուի՝ երբ ճրագն սկուտեղ մը կը ձեւացընէ , այն ատեն անոր եղերքն կ'արգելուն օդն պատրուգին վրայ հասնելու , ասով շատ ածղուկ կը մնայ առանց սպառելու :

467 Ինչո՞ւ համար ձէթով կանթեղներն երբեմն խիտ ծուխ մը կ'արձրկեն : — Կամ անոր համար որ պատրոյգն հաւասար կտրուած չէ , և կամ որ շատ բարձր է :

468 Ինչո՞ւ համար անհաւասար կը տրուած պատրուգով կանթեղ մը ծուխ կը ձգէ : — Նախ որ , պատրուգին ծայրի կէտերն կամ ակուաներն անկէ դիւրաւ կը զատուին , և բոցին շատ ածղուկ կը բերեն , այնպէս որ չի կը բուսեղինար բոլորն ալ սպառել : — Բ . Բոցին տաքութիւնն շատ կը նուազի այս պատրուգի կտորներով , և չի կը բուսեղինար ամբողջապէս այրել առաջ բերած ածղուկը :

469 Ինչո՞ւ համար եթէ կանթեղի մը պատրոյգն շատ բարձր ըլլայ , ծուխ կը պատճառէ : — Որովհետեւ շատ երկայն պատրոյգն զբոցը կը պաղեցընէ , և ասիկայ ոյժ չունենար առաջ եկած ածղուկը սպառելու :

470 Ինչո՞ւ համար շատ երկայն պատրոյգներն զբոցը կը պաղեցընեն : — Պատրոյգն այն կէտն է՝ յորում կ'ըլլայ բաղալուծունն կամ քայքայունն ձիթոյ և իրեն հետ միացեալ գոյութիւնաց . բայց որպէս զի այն լուծմունքն ըլլայ՝ շատ սաստիկ տաքութեան աստիճան մը պէտք է , և այս տաքութիւնը որչափ աւելի ունենայ պատրոյգն , այնչափ կը նուազեցընէ զբոցը . ուրեմն որչափ որ պատրոյգն երկայն ըլլայ , այնչափ ալ աւելի կը պաղի բոցն :

471 Ինչո՞ւ համար արկանու (d'Argand) ըսուած ճրագներն ծուխ չեն ձգեր : — Որովհետեւ այս կանթեղներուն բոցին բոլոր երկայնքէն հովու ընթացք մը կ'անցնի . հետեւաբար բոլոր ածղուկն կը զուգադրի այն թթուածնին հետ՝ որ իրեն կու գայ առատապէս , և ասկէ կը հետեւի կատարեալ կիզում մը :

472 Ի՞նչ բանի համար կանթեղներուն վրայ ապակիէ խողովակներ կը դնեն : — Որպէս զի ծուխ չընեն :

473 Ի՞նչ կերպով ապակեայ խողովակն կ'արգելու ծուխը : — Նախ կենդրոնացը նելով և անդրագարձընելով բոցին ջերաբեր ճառագայթները՝ անոնց ոյժը և սաստկութիւնը կ'աւելցընէ , ասով բոլոր ածզուկն ալ կ'այրի : — Բ . Խողովակին մէջի օդը շատ աւելի կ'անօսրի և վերի բերնէն դուրս կ'ելլայ , մինչդեռ ատորին ճեղքերէն նոր օդ ներս կը մտնէ . ասով առաջ կուգայ սաստիկ օդոյ ընթացք մը , որ լաւ կը սնուցանէ զբոցը :

474 Այս ըսած խողովակները պէտք է մասնաւոր պայմաններ ալ ունենան՝ որ աղէկ բանի գան : — Այս . ամեն խողովակ ամեն կանթեղի չի յարմարիր :

475 Ուրեմն ինչպէս յարմարցընելու է կանթեղներուն խողովակներն : — Իրեւ կրակարան մը սեպելով այն կէտք՝ ուսկից բոցն կ'ելլայ , պէտք է դիտել որ խողովակըն ամենեին նման ըլլայ ծխանի մը խողովակին . վասն զի յիրաւի ալ պղտի չափով մը կանթեղներուն մէջի կիզումն ալ նոյն և նման է ծխանին ջերարաններու կիզման , և մի և նոյն անպատշաճութիւնները կըրնայ ունենալ :

Գ . — Բոց :

476 Ի՞նչ բան է բոցն : — Կիզանուտ կազային գոյութեան շարժմանը արգասիքն , թթուածընի միջոցով տաքցած , ինչուան լուսաւորելու աստիճան :

477 Գինիի ոգւոյն բոցն ալ ունի՞ այս ջերմութիւնը : — Այս . այն ալ ունի ուրիշներուն մէջ :

478 Ուրեմն ինչու համար ալքոոլի բոցին մէջ մարգս կըրնայ քանի մը վայրկեան մատը բռնել առանց այրուելու : — Որովհետեւ ալքոոլը խիստ շուտով թռչական կ'ըլլայ , և մասնաւորապէս բոցին մէջ շատ շլուծուած ալքոոլ կը գտնուի , ասոր համար երբ անոր մէջ մատ մը միուի՝ ասիկայ աւելի պաղ ըլլալուն պատճառաւ՝ մէկէն ալքոոլի մաս մը կը խտացընէ , որ նորէն թռչական ըլլալու համար՝ մատին ջերմութիւնը կը քաշէ :

479 Ուրիշ ինչ փորձ կայ ցուցընելու որ ալքոոլն այրելու ատենը՝ մերձակայ

մարմնոց ջերմութիւնը իրեն կը քաշէ : — Պատրոյգն , որ միշտ պաղ կը մնայ , այնպէս որ երբեք չածզանար :

(Ալքոոլի կանթեղի մը պատրոյգն այն ատեն միայն կ'ածզանայ՝ երբ բոցն ուրիշ սունդ չունենայ :)

480 Ի՞նչ կերպով կ'իմացուի որ ալքոոլն բոցն տաք է ինչուան 600 աստիճան : — Այս բանս կիմացուի երբ տեսնենք թէ ինչպէս դիւրաւ ալքոոլի բոց մը կը կազզացընէ ապակին , կը կարմրցընէ երկաթը , կը հալեցընէ կապարը , և այլն :

(Կապարն 320 աստիճան տաքութեան կ'ուղէ հալելու , իսկ ապակին կակզանաւու համար՝ աւելի բարձր աստիճան մը :)

481 Ի՞նչ պատճառաւ քանի մը գոյացութիւնք միշտ բոց պատճառելով կ'այրին՝ ուրիշներն ալ առանց բոցի : — Ամեն հասատուն մարմին՝ որ անընդունակ է կազդառնալու՝ կրակին ազդեցութեամբը կը կարմրի , բայց բոց չիհաներ . ընդհակառակն բոլոր կիզանուտ մարմիններն , և անոնք ալ որ միշտ ջերմութեան միջոցով կըրնան կիզանուտ կազի դառնալ , բոց կը հանեն :

482 Ճրագի մը բոցին կազմուածքն քանի մասն ունի : Չորս մաս ունի : — Ա . — Յատակն , որուն մէջ կը նշմարուի բաժակ մը թուխ կապյոտ գոյնով : — Բ . Կենդրունը , խաւար միջոց մ'է որ փայլուն շրջապատին միջէն կ'երեայ : — Գ . Փայլուն մասն , կամ յատկապէս բոց ըստածն , որ կենդրոնական միջոցը կը պատէ : — Դ . Վերջին պատառն , քիչ լուսաւոր , որուն մէջ կը կատարուի կազերուն կիզումն . բոցին այս մասին մէջ ջերմութիւնն ամենէն սաստիկն է :

483 Ի՞նչ պատճառաւ բոցին ստորին մասն թուխ կապտագոյն է : — Նախ որովհետեւ այս մասս ամենէն աւելի շողիներով և կազերով լի է : — Բ . Բարեխառնութիւնն չիկըրնար հոս շատ բարձր ըլլալ , որովհետեւ ճարպն և ձեթն առատաբար կը թոշին մասնաւորապէս այս մասին վրայ : — Գ . Ածղուկն անոր վրայ դեռ չէ լուսակիզն :

Կը շարունակուի :